ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ

10.03.2020թ. *Քրեական գործ*
ք. Երևան *թիվ ԿԴ1/0045/01/19*

ՈՐՈՇՈՒՄ
Թիվ ԿԴ1/0045/01/19 քրեական գործով ընդդատության վեճը լուծելու մասին

1. Գործի դատավարական նախապատմությունը և ընդդատության հարցի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքները.

2019 թվականի հոկտեմբերի 21-ին Լոռու մարզի դատախազությունից Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում ստացվել է թիվ 33100219 (գործ թիվ ԿԴ1/0045/01/19) քրեական գործն ըստ մեղադրանքի Համլետ Վազգենի Անադյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 139-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով:

2019 թվականի հոկտեմբերի 22-ին Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (դատավոր Գ. Մարգարյան) (այսուհետ՝ նաև Դատարան) քրեական գործն ընդունել է վարույթ և նշանակել դատաքննության:

2020 թվականի փետրվարի 6-ին Դատարանը, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 44-րդ, 47-րդ և 50-րդ հոդվածներով, որոշում է կայացրել թիվ ԿԴ1/0045/01/19 քրեական գործը տարածքային ընդդատության կարգով Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ուղարկելու մասին՝ հետևյալ հիմնավորմամբ.

«(...):

Նշանակված դատական նիստերին տուժողը, տուժողի օրինական ներկայացուցիչը և ներկայացուցիչը չեն ներկայացել, դատարանին տեղեկացրել են, որ իրենց համար դժվար է ներկայանալ դատական նիստերին և դիմումով խնդրել են գործն ուղարկել ընդդատության՝ Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան:

Դատական նիստի ընթացքում պաշտպանության կողմը միջնորդել է գործն ըստ ընդդատության ուղարկել Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան, քանի որ գործով անցնող անձինք հանդիսացել են Լոռու մարզի բնակիչներ:

Ամբաստանյալ Անադյանը նույնպես միջնորդել է, որպեսզի գործն ուղարկվի ընդդատության կարգով Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան: Բացի այդ, տուժողը, տուժողի օրինական ներկայացուցիչը և վկաները նույնպես բնակվում են Լոռու մարզում: Այսինքն՝ դատավարության մասնակիցների համար մեծ դժվարություն է ամեն դատական նիստին Լոռու մարզից գալ և մասնակցել Կոտայքի մարզի Եղվարդ քաղաքում կայացվելիք դատական նիստերին, ինչի մասին տուժողի օրինական ներկայացուցիչը և ներկայացուցիչը գրավոր և բանավոր հայտնել են դատարանին:

(...):

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով, որ քրեական գործով անցնող անձանց մեծամասնությունը բնակվում են Լոռու մարզում, ինչպես նաև ամբաստանյալը տվել է իր համաձայնությունը գործն ըստ ընդդատության ուղարկելու վերաբերյալ, ուստի դատարանը գտնում է, որ քրեական գործն ըստ տարածքային ընդդատության պետք է ուղարկել Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան:

(...)»:

2020 թվականի փետրվարի 19-ին թիվ ԿԴ1/0045/01/19 քրեական գործը ստացվել է Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում:

2020 թվականի փետրվարի 21-ին Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (դատավոր՝ Ս. Գզոգյան), վկայակոչելով «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը, ՀՀ Սահմանադրության 5-րդ, 63-րդ հոդվածները, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 41-րդ, 47-րդ, 49-րդ և 51-րդ հոդվածները, ընդդատության վերաբերյալ ծագած վեճը լուծելու խնդրանքով դիմել է Վճռաբեկ դատարանի նախագահին՝ հետևյալ հիմնավորմամբ.

«Սույն քրեական գործի նյութերից բխում է, որ մեղադրյալ Համլետ Անադյանին մեղսագրվող ենթադրյալ հանցավոր արարքը կատարվել է Կոտայքի մարզի տարածքում: Գտնում եմ, որ թիվ ԿԴ1/0045/01/19 քրեական գործն ընդդատյա է Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին: Եթե ընդառաջվենք այն տրամաբանությամբ, որ քրեական գործը պետք է քննի այն դատարանը, որի տարածքում բնակվում են դատավարության մասնակիցներից մի քանիսը, ապա դա կարող է կամայականությունների տեղիք տալ, և հնարավորություն տալ կողմերին, մասնավորապես տվյալ գործով տուժող կողմին ինքնուրույն կամ համաձայնության գալով դատավարության մյուս մասնակիցների հետ որոշելու քրեական գործի ընդդատությունը, ինչպես նաև իր գործողություններով կամ անգործությամբ դրդել դատարանին փոխել ընդդատությունը:

Այսպիսով, գտնում եմ, որ թիվ ԿԴ1/0045/01/19 քրեական գործն ընդդատյա չէ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին, հետևաբար,

դրա ըստ էության քննությունն այս դատարանում կհանգեցնի մեղադրյալ Համլետ Անադյանի արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ տարր հանդիսացող՝ «օրենքի հիման վրա ստեղծված» իրավասու դատարանի սկզբունքի խախտմանը»:

2020 թվականի մարտի 2-ին թիվ ԿԴ1/0045/01/19 քրեական գործը ստացվել է Վճռաբեկ դատարանում:

2. Կիրառելի իրավական նորմերը, պատճառաբանությունները և եզրահանգումը.

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 24-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ ոչ ոքի չի կարելի զրկել իր գործն այն դատարանում և այն դատավորի կողմից քննելու իրավունքից, որոնց ընդդատությանն այն վերապահված է օրենքով:

Օրենսգրքի 44-րդ հոդվածի համաձայն՝ առաջին ատյանի դատարանները քննում են բոլոր քրեական գործերը (...):

Օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ առաջին ատյանի դատարանին ընդդատյա են այն հանցագործությունների վերաբերյալ գործերը, որոնք կատարվել են համապատասխան առաջին ատյանի դատարանի դատական տարածքում: Տևող հանցագործությունը համարվում է կատարված այն տարածքում, որտեղ այն ավարտվել է: Շարունակվող հանցագործությունը համարվում է կատարված այն տարածքում, որտեղ կատարվել է քրեական օրենսգրքով չթույլատրված վերջին արարքը:

Օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ երկու կամ ավելի հանցագործությունների վերաբերյալ գործերն առաջին ատյանի տարբեր դատարաններին ընդդատյա լինելու դեպքում դրանք միացնելիս գործը քննում է այն դատարանը, որի դատական տարածքում ավարտվել է տվյալ գործով մինչդատական վարույթը:

Օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Դատարանը, պարզելով, որ ստացված գործն ընդդատյա չէ իրեն, այն ուղարկում է ըստ ընդդատության:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե սույն օրենսգրքի 44, 47 կամ 48 հոդվածով նախատեսված ընդդատության կարգի խախտումը հայտնաբերվում է դատական քննության ժամանակ, ապա կողմերի համաձայնությամբ դատարանն իրավասու է գործը թողնել իր վարույթում: Կողմերից մեկի առարկության դեպքում գործի

կատարված դատական քննությունը չեղյալ է համարվում, և գործն ուղարկվում է ըստ ընդդատության:

Օրենսգրքի 50-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ քրեական գործի տարածքային ընդդատությունը կարող է փոխվել բոլոր մեղադրյալների համաձայնությամբ, եթե տվյալ գործով քրեական դատավարությանը մասնակցող անձանցից շատերը բնակվում են տվյալ առաջին ատյանի դատարանի դատական տարածքից դուրս: Ընդդատությունը փոխելու որոշումը համապատասխան դեպքերում ընդունում է գործը քննող դատարանը:

Օրենսգրքի 292-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ քրեական գործն իր վարույթ ընդունած դատավորը հետազոտում է գործի նյութերը և քրեական գործը վարույթ ընդունելու պահից 15 օրվա ընթացքում կայացնում հետևյալ որոշումներից մեկը՝ (...) գործն ըստ ընդդատության ուղարկելու մասին (...):

Օրենսգրքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ առաջին ատյանի դատարանների միջև ընդդատության մասին վեճերը լուծում է Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի նախագահը:

Այսպես. Գտնում եմ, որ սույն քրեական գործով առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների միջև ծագած ընդդատության վեճը լուծելու համար անհրաժեշտ է վերլուծել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ գլխով սահմանված ընդդատության վերաբերյալ ընդհանուր և հատուկ կանոնները (նորմերը), քրեական գործի տարածքային ընդդատությունը փոխելու հնարավորություն սահմանող նորմը և այդ նորմերի հարաբերակցության խնդիրը:

Օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին մասի ուսումնասիրությունից հետևում է, որ քրեական գործերի ընդդատության ընդհանուր կանոնն այն է, որ առաջին ատյանի դատարանին ընդդատյա են այն հանցագործությունների վերաբերյալ գործերը, որոնք կատարվել են տվյալ առաջին ատյանի դատարանի դատական տարածքում: Նույն հոդվածի 2-րդ մասն ընդհանուր կանոնից որոշակի բացառություններ է սահմանել տևող և շարունակվող հանցագործությունների համար, մասնավորապես՝ սահմանվել է, որ տևող հանցագործությունը համարվում է կատարված այն տարածքում, որտեղ այն ավարտվել է, իսկ շարունակվող հանցագործությունը համարվում է կատարված այն տարածքում, որտեղ կատարվել է քրեական օրենսգրքով չթույլատրված վերջին արարքը: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ այլ պետության տարածքում կատարված հանցանքի վերաբերյալ գործն ընդդատյա է այն դատարանին, որի դատական տարածքում է գտնվում մեղադրյալի բնակության վերջին վայրը, իսկ եթե չի հաջողվել պարզել այն, ապա այն դատարանին, որի դատական տարածքում ավարտվել է քրեական գործով մինչդատական վարույթը:

Դրանից բացի, ընդդատության վերաբերյալ ընդհանուր կանոնից բացառություն է սահմանված նաև Օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասով, որի համաձայն՝ երկու կամ ավելի հանցագործությունների վերաբերյալ գործերն առաջին ատյանի տարբեր դատարաններին ընդդատյա լինելու դեպքում դրանք միացնելիս գործը քննում է այն

դատարանը, որի դատական տարածքում ավարտվել է տվյալ գործով մինչդատական վարույթը:

Օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Դատարանը, պարզելով, որ ստացված գործն ընդդատյա չէ իրեն, այն ուղարկում է ըստ ընդդատության:

Վերոգրյալ իրավակարգավորումների համակարգային վերլուծության արդյունքում կարելի է արձանագրել, որ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը քրեական գործը վարույթ ընդունելու պահից 15 օրվա ընթացքում կարող է կայացնել գործն ըստ ընդդատության ուղարկելու մասին որոշում, եթե գործի նյութերի հետազոտման արդյունքում հիմնավորվում է, որ ընդդատության վերը նշված ընդհանուր և հատուկ կանոնների հաշվառմամբ գործը տվյալ դատարանին ընդդատյա չէ:

Այդուհանդերձ, հարկ է նշել, որ այն բոլոր դեպքերում, երբ գործն Օրենսգրքի 44-րդ, 47-րդ կամ 48-րդ հոդվածներով սահմանված ընդդատության կարգի խախտմամբ վարույթ ընդունված լինելու հանգամանքը պարզվում է դատական քննության ժամանակ, ապա կողմերի համաձայնությամբ դատարանն իրավասու է գործը թողնել իր վարույթում: Կողմերից մեկի առարկության դեպքում գործի կատարված դատական քննությունը չեղյալ է համարվում, և գործն ուղարկվում է ըստ ընդդատության:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարելի է փաստել, որ դատական քննության ժամանակ գործի՝ Օրենսգրքի 44-րդ, 47-րդ կամ 48-րդ հոդվածներով սահմանված ընդդատության կարգի խախտմամբ վարույթ ընդունված լինելու հանգամանքը պարզվելու դեպքում դատարանը կարող է գործն ուղարկել ըստ ընդդատության, եթե կողմերից մեկը առարկում է գործը տվյալ դատարանի վարույթում թողնելուն:

Հետևաբար, այս դեպքում միայն վերը նշված երկու պայմանների միաժամանակյա առկայությամբ գործն ըստ ընդդատության ուղարկված լինելու դեպքում է հնարավոր արձանագրել, որ գործն ըստ ընդդատության ուղարկած առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը չի հանդիսանում այն իրավասու դատարանը, որը տվյալ գործով պետք է իրականացնի հետագա քննություն:

Միաժամանակ, սույն որոշման շրջանակներում անհրաժեշտ եմ համարում անդրադառնալ քրեադատավարական մեկ այլ ինստիտուտի՝ քրեական գործի տարածքային ընդդատությունը փոխելուն, և դրա՝ ընդդատության ընդհանուր և հատուկ կանոնների հետ հարաբերակցության խնդրին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ ոչ ոքի չի կարելի զրկել իր գործն այն դատարանում և այն դատավորի կողմից քննելու իրավունքից, որոնց ընդդատությանն այն վերապահված է օրենքով:

Քրեական գործի տարածքային ընդդատությունը փոխելու իրավական հնարավորություն ընձեռող իրավակարգավորումները սահմանված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 50-րդ հոդվածով, որի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործի տարածքային ընդդատությունը կարող է փոխվել բոլոր մեղադրյալների համաձայնությամբ, եթե տվյալ գործով քրեական դատավարությանը մասնակցող անձանցից շատերը բնակվում են տվյալ առաջին ատյանի դատարանի դատական

տարածքից դուրս: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ընդդատությունը փոխելու որոշումը համապատասխան դեպքերում ընդունում է գործը քննող դատարանը:

Վերոգրյալ իրավակարգավորումների համակարգային վերլուծության արդյունքում կարելի է հստակորեն արձանագրել, որ.

ա) քրեական գործն ըստ ընդդատության ուղարկելը և քրեական գործի տարածքային ընդդատությունը փոխելը քրեադատավարական տարբեր ինստիտուտներ են, տարբեր են այդ իրավակարգավորումների հիմքում ընկած կանոնները և գնահատման ենթակա հանգամանքները, տարբեր են նաև այդ իրավակարգավորումներով հետապնդվող նպատակները:

բ) Քրեական գործն ըստ ընդդատության ուղարկելու համար անհրաժեշտ նախապայմաններ են ընդդատության ընդհանուր կամ հատուկ կանոնների խախտված լինելու հանգամանքի առկայությունը, իսկ այդ հանգամանքի դատական քննության ժամանակ պարզված լինելու դեպքում՝ նաև կողմերից մեկի առարկությունը՝ ուղղված գործը տվյալ դատարանի վարույթում թողնելուն:

գ) Քրեական գործի տարածքային ընդդատությունը փոխելու հարց քննարկելու փուլում դատարանի կողմից չի քննարկվում քրեական գործի ընդդատության ընդհանուր կամ հատուկ կանոնների պահպանված լինելու հարց, քանի որ Օրենսդիրը քրեական գործի տարածքային ընդդատությունը փոխելու համար սահմանել է այլ պայմանների միաժամանակյա պարտադիր առկայության պահանջ: Մասնավորապես՝ 1) պետք է առկա լինի քրեական գործի տարածքային ընդդատությունը փոխելու վերաբերյալ բոլոր մեղադրյալների[1] համաձայնությունը, 2) տվյալ գործով քրեական դատավարությանը մասնակցող անձանցից շատերը պետք է բնակվեն տվյալ առաջին ատյանի դատարանի դատական տարածքից դուրս:

դ) Քրեական գործի տարածքային ընդդատությունը փոխելու հարց քննարկող դատարանը դատական նիստի ընթացքում և քրեական գործի նյութերը հետազոտելիս պետք է պարզի գ) կետում նշված երկու պայմանների միաժամանակյա առկայության հանգամանքը և դրա հաշվառմամբ միայն կայացնի համապատասխան որոշում:

Թիվ ԿԴ1/0045/01/19 քրեական գործով Դատարանի 2020 թվականի փետրվարի 6-ի որոշման բովանդակության ուսումնասիրությունից հետևում է, որ Դատարանը, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 44-րդ, 47-րդ և 50-րդ հոդվածներով, որոշում է կայացրել քրեական գործի տարածքային ընդդատությունը փոխելու և քրեական գործը Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ուղարկելու մասին:

[1] Օրենսգրքի 64-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մեղադրյալ է այն անձը, որի նկատմամբ որոշում է կայացված որպես մեղադրյալ ներգրավելու մասին: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մեղադրյալը, որի վերաբերյալ գործը նշանակված է դատական քննության, կոչվում է ամբաստանյալ: Հետևաբար, Օրենսգրքի 50-րդ հոդվածի 1-ին մասում նշված՝ «մեղադրյալների համաձայնությամբ» եզրույթն ամբողջությամբ կիրառելի է նաև ամբաստանյալի դատավարական կարգավիճակ ունեցող մեղադրյալի նկատմամբ:

Նույն գործով Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դիրքորոշման բովանդակության ուսումնասիրությունց հետևում է, որ դատարանը, վկայակոչելով «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը, ՀՀ Սահմանադրության 5-րդ, 63-րդ հոդվածները, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 41-րդ, 47-րդ, 49-րդ և 51-րդ հոդվածները, հայտնել է իր անհամաձայնությունը քրեական գործի տարածքային ընդդատությունը փոխելուն:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ Վճռաբեկ դատարանի նախագահը քրեական գործի տարածքային ընդդատությունը փոխելու կապակցությամբ առաջին ատյանի դատարանների միջև ծագած վեճը ևս դիտարկում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի իրավակարգավորման լույսի ներքո՝ որպես ընդդատության մասին ծագած վեճ:

Հետևաբար, հարկ է արձանագրել, որ Վճռաբեկ դատարանի նախագահի կողմից սույն գործով ծագած վեճի լուծումը դիտարկվել է միայն Դատարանի կողմից քրեական գործի ընդդատությունը փոխելու հարցի իրավաչափության շրջանակներում:

Վերոգրյալ իրավական նորմերը, դրանց վերաբերյալ կատարված վերլուծությունները համադրելով սույն քրեական գործի նյութերի հետ՝ կարելի է արձանագրել և փաստել հետևյալը.

ա) թիվ ԿԴ1/0045/01/19 քրեական գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ 2020 թվականի փետրվարի 6-ին անչափահաս տուժողի օրինական ներկայացուցիչ Լյուբա Աբրահամյանը դիմում է ներկայացրել դատարան և խնդրել քրեական գործն ուղարկել Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

Քրեական գործի տարածքային ընդդատությունը փոխելուն չեն առարկել մեղադրողը, ամբաստանյալը և պաշտպանը (հատոր 3, գ.թ. 128-129):

բ) Քրեական դատավարությանը մասնկացող անձանցից շատերը բնակվում են Դատարանի դատական տարածքից դուրս, մասնավորապես՝ մեղադրող Ա. Պողոսյանը, տուժողի օրինական ներկայացուցիչ Լ. Աբրահամյանը, դատակոչի ենթակա վեց վկաներից հինգը՝ Լ. Արտավազդյանը, Ն. Մկրտչյանը, Ռ. Հովհաննիսյանը, Լ. Աքմաքչյանը և Գ. Գուրջանյանը բնակվում են Լոռու մարզում, տուժող Մ. Արտավազդյանը և նրա ներկայացուցիչ՝ Ա.Ղանդիլյանը բնակվում են Գյումրի քաղաքում, ամբաստանյալի պաշտպան Մ.Թովմասյանն էլ բնակվում է Երևան քաղաքում: Կոտայքի մարզում է բնակվում վկա Շ.Կարապետյանը:

Գտնում եմ, որ ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ ամբաստանյալը հանդիսացել է ՀՀ ԱՆ «Վանաձոր» ՔԿՀ-ի կալանավոր, և միայն Դատարանի 22.10.2019թ. գրության հիման վրա է տեղափոխվել ՀՀ ԱՆ «Հրազդան» ՔԿՀ:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարելի է փաստել, որ սույն քրեական գործի նյութերում առկա են Դատարանի կողմից քրեական գործի տարածքային ընդդատությունը փոխելու համար ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 50-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված անհրաժեշտ և բավարար հիմքերը, մասնավորապես՝ քրեական գործի տարածքային ընդդատությունը փոխելուն չի առարկել թիվ ԿԴ1/0045/01/19 քրեական

գործով միակ ամբաստանյալ Համլետ Վազգենի Անադյանը: Նշված հանգամանքի դեմ չեն առարկել նաև գործով մեղադրողը և ամբաստանյալի պաշտպանը, և, ինչպես վերը նշվեց, քրեական դատավարությանը մասնկացող անձանցից շատերը բնակվում են Դատարանի դատական տարածքից դուրս:

Հետևաբար, հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն քրեական գործի նյութերում առկա են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 50-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված անհրաժեշտ և բավարար հիմքերը Դատարանի կողմից քրեական գործի տարածքային ընդդատությունը փոխելու համար, ուստի ամբաստանյալ Համլետ Վազգենի Անադյանին չի կարելի զրկել իր վերաբերյալ գործը Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից քննելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված իր իրավունքից:

Հիմք ընդունելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները, և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Թիվ ԿԴ1/0045/01/19 քրեական գործն ընդդատյա է Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

2. Սույն որոշումը և թիվ ԿԴ1/0045/01/19 քրեական գործն ուղարկել Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

3. Սույն որոշման օրինակն ուղարկել Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

ԵՐՎԱՆԴ ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ